ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 462-Ա
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարեն Մարտիրոսյանը*/ծնված՝ 09.09.1973թ., անձնագիր՝ AS0216762, տրված՝ 07.06.2018թ. 057-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Երևանյան փողոց, 58 տուն հասցեում, ՀԾՀ՝ 1909730068/* 10.07.2023 թվականին ներկայացել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան, ներկայացրել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունների մասնակի վճարման անդորրագիր */վճարման անդորրագրի օրդեր՝ թիվ 78034222/* և հիմք ընդունելով վերջինիս կողմից 10.07.2023 թվականին ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանին ներկայացված հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց կազմելու վերաբերյալ թիվ 2647 դիմումը՝***որոշում եմ՝***

1. Կարեն Նորայրի Մարտիրոսյանի հետ կնքել հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց՝ 6 ամիս ժամկետով՝ համաձայն հավելվածի:

2. Կարեն Մարտիրոսյանից գանձել ընդհանուր ***148.078 /մեկ հարյուր քառասունութ հազար յոթանասուութ/ ՀՀ դրամ,*** որից ***55.564 /հիսունհինգ հազար հինգ հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամը՝*** որպես 04-094-0063-0013-001 կադաստրային ծածկագրով գ. Փարաքար, Երևանյան 22 հասցեում գտնվող անհատական բնակելի տան գույքի հարկի գծով 2008-2020 թվականների համար 10.07.2023 թ. դրությամբ հաշվարկված պարտավորության գումար (32.709 /երեսուներկու հազար յոթ հարյուր ինը/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 22.855 /քսաներկու հազար ութ հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) */վճարման հաշվի համար՝ 900325191501/* և ***10.209 /տասը հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամը՝*** */վճարման հաշվի համար՝ 900325005958/*, որպես գ. Փարաքար Երևանյան 58 հասցեում գտնվող 04-094-0063-0013-0001 գույքի համար 10.07.2023թ. դրությամբ 2020-2023թթ համար հաշվարկված անշարժ գույքի հարկի գծով 2/3 չափով պարտավորության գումար, ***8932 /ութ հազար ինը հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամը՝*** 10.07.2023 թվականի դրությամբ 2020-2023թթ. համար հաշվարկված 04-094-0560-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի գծով ½ մասով հարկային պարտավորության գումար (8064 /ութ հազար վաթսունչորս/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 868 /ութ հարյուր վաթսունութ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) */վճարման հաշվի համար՝ 900325005958/*, իսկ հողի հարկի գծով 2008-2020 թվականների համար 06.04.2023թ. դրությամբ հաշվարկված՝ ***60.178 /վաթսուն հազար մեկ հարյուր յոթանասուութ/ ՀՀ դրամ*** (47.555 /քառասունյոթ հազար հինգ հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 12.623 տասներկու հազար վեց հարյուր քսաներեք/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) */վճարման հաշվի համար՝ 900325191048/* , իսկ ***13.195 /տասներեք հազար մեկ հարյուր հինսունհինգ/ ՀՀ դրամը՝*** որպես 04-094-063-013 կադաստրային ծածկագրով հողի հարկի գծով 0,734 հա մակերեսով տնամրծ հողամասի համար 10.07.2023թ. դրությամբ 2008-2020թթ. համար

հաշվարկված հարկային պարտավորության գումար (5595 /հինգ հազար հինգ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 7600 /յոթ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) *<u>/վճարման հաշվի համար՝ 900325191048/:</u>*

3. Սույն որոշմանը կից հավելվածով սահմանված ժամանակացույցի վճարման ժամկետները խախտելու դեպքում Կարեն Մարտիրոսյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին Կարեն Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 24
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 463-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2- րդ մասի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գևորգ Աղվանի Գարեգինյանը /ծնված՝ 14.03.1955թ., անձնագիր՝ AR0599139, տրված՝ 21.02.2018թ. 057-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Նաիրի փողոց 24/1 տուն հասցեում, ՀԾՀ՝ 2403550401/ 21.07.2023 թվականին ներկայացել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան, ներկայացրել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունների մասնակի վճարման անդորրագիր /վճարման անդորրագրի օրդեր՝ թիվ 78935485/ և հիմք ընդունելով Գևորգ Գարեգինյանի կողմից 21.07.2023 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանին ներկայացված հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց կազմելու վերաբերյալ թիվ 2904 դիմումը՝ որոշում եմ՝

1. Գևորգ Աղվանի Գարեգինյանի հետ կնքել հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց՝ 6 ամիս ժամկետով՝ համաձայն հավելվածի:

2. Գևորգ Գարեգինյանից գանձել ընդհանուր 87.199 /ութսունյոթ հազար մեկ հարյուր իննսունինը/ ՀՀ դրամ, որից 6182 /վեց հազար մեկ հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամը՝ որպես 24.07.2023 թվականի դրությամբ 04-094-0018-0023-006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկի գծով 2021-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (5631 /հինգ հազար վեց հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 551 /հինգ հարյուր հիսունմեկ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325005958/, 47.375 /քառասունյոթ հազար երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0018-0023-002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի համար 24.07.2023թ. դրությամբ՝ 2008-2020 թվականների համար հաշվարկված գույքահարկի գծով հարկային պարտավորության գումար (26.649 /քսանվեց հազար վեց հարյուր քառասունինը/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 20.726 /քսան հազար յոթ հարյուր քսանվեց/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191501/, իսկ 33.642 /երեսուներեք հազար վեց հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-018-023 կադաստրային ծածկագրով 0,078 հա մակերեսով տնամերձ հողամասի հողի հարկի գծով 2010-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար /վճարման հաշվի համար՝ 900325191048/:

3. Սույն որոշմանը կից հավելվածով սահմանված ժամանակացույցի վճարման ժամկետները խախտելու դեպքում Գևորգ Գարեգինյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին Գևորգ Գարեգինյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 25
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 464Ա

ՌՈՒՍՏԱՄ ՌԱՆԴԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ սեփականության իրավունքով Ռուստամ Ռանդիկի Հարությունյանին / անձնագիր՝ AU 0341655 տրված՝ 6.07.2021թ. 009-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, քաղաք Երևան, Նոր Արեշի 15փ. 5 բն. հասցեում / պատկանող ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Մուսալեռ գյուղի Երևանյան 1-ին փողոց 59 հասցեում, 04-069-0103-0123 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առանց համապատասխան թույլտվության իրականացվել է ինքնակամ շինարարություն, մասնավորապես՝ գոյություն ունեցող ծածկի վերակառուցման, ասֆալտապատ տարածքի քանդման և կոնստրուկցիայով հիմքերի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար տուգանք նշանակելու մասին հարցը, պարզեց որ.

Ռուստամ Ռանդիկի Հարությունյանը խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում, ինչի կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ս. Մինասյանին 20.07.2023թ. թիվ ՔՏՄ/17.4/15429-23 գրության և ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Միքաելյանի 24.07.2023թ. թիվ 2930 զեկուցագրի հիման վրա 2023 թվականի հուլիսի 24-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Փարաքարի համայնքապետարանի

վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկայացել է իրավախախտ Ռուստամ Հարությունյանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Փարաքար համայնքի վարչական սահմաններում ապօրինի շինարարությունները կանխարգելելու նպատակով հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների կողմից ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Մուսաեռ գյուղի Երևանյան 1-ին փողոց 59 հասցեում ապօրինի շինարարություն կատարելու մասին 24.07.2023թ. կազմված արձանագրությունը, վարչական հանձնաժողովի 25.07.2023թ. արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի 24.07.2023թ. թիվ 2930 զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ռուստամ Հարությունյանի կողմից Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Երևանյան 1-ին փողոց 59 հասցեում, 04-069-0103-0123 կադաստրային ծածկագրով, իրեն սեփականության իրավունքով պատկանող հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առանց համապատասխան շինարարական թույլտվության կատարվել են շինարարական աշխատանքներ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի հուլիսի 24-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 հուլիսի 25-ին հրավիրվել է վարչական նիստ, որին մասնակցելու նպատակով Ռուստամ Հարությունյանը պատշաճ ծանուցվել է՝ ծանուցումն առձեռն՝ ստորագրությամբ հանձնելու միջոցով և ներկայացել է վարչական նիստին:

Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել Ռ. Հարությունյանի կողմից ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով կատարված իրավախախտման վերաբերյալ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում Ռուստամ Հարությունյանը առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Երևանյան 1-ին փողոց 59 հասցեում, 04-069-0103-0123 կադաստրային ծածկագրով հողամասում իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ՝ գոյություն ունեցող ծածկի վերակառուցման, ասֆալտապատ տարածքի քանդման և կոնստրուկցիայով հիմքերի կառուցման աշխատանքներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի

154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասերով նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

տավարձի հարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 25.07.2023թ. արձանագրությունը և Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի կողմից 24.07.2023թ. թիվ 2930 զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտ Ռուստամ Հարությունյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Երևանյան 1-ին փողոց 59 հասցեում գտնվող՝ 04-069-0103-0123 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական

կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առանց համապատասխան թույլտվության իրականացվել է ինքնակամ շինարարություն, մասնավորապես՝ գոյություն ունեցող ծածկի վերակառուցման, ասֆալտապատ տարածքի քանդման և կոնստրուկցիայով հիմքերի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325176296 հաշվեհամարին՝ ստացող Փարաքար համայնք:

2. Առաջարկել իրավախախտող Ռուստամ Հարությունյանին սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրյա ժամկետում վերացնել իրավախախտման հետևանքները:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Իրավախախտ Ռուստամ Հարությունյանին նախազգուշացնել, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել ինքնակամ կառույցի շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի վրա:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. հուլսիս 25
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 465-Ա

«ՄՈՒՍԱԼԵՌ» ԱԿ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ սեփականության իրավունքով «Մուսալեռ» ԱԿ՝ ի դեմս տնօրեն Արտակ Անդրանիկի Եղիազարյանի /անձնագիր՝ AU 0672873 տրված՝ 06.04.2022թ. 057-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Վաղարշապատ, Բաղրամյան 16շ. 9 բն. հասցեում/ պատկանող ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Մուսա Լեռան փողոց 1 հասցեում, իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ 04-030-0187-0002 կադաստրային ծածկագրով /վկայական 11032021-04-0071, տրված՝ 11.03.2021թ./, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինարարություն, մասնավորապես՝ 13.03.2023թ. տրված թիվ 34 շինարարության թույլտվությամբ տրված սրճարանի առանձին մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման, առանց ՔՏՀԱՏՄ-ին շինարարաության թույտվություն և 5-րդ ձևի տեղեկանք ներկայացնելու մասին հարցը, պարզեց որ.

«Մուսալեռ» ԱԿ տնօրեն Արտակ Անդրանիկի Եղիազարյանը խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում, ինչի կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ս. Մինասյանին 12.07.2023թ. թիվ ՔՏՄ/17.4/14732-23 գրության և ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Միքաելյանի 24.07.2023թ. թիվ 2929 զեկուցագրի հիման վրա 2023 թվականի հուլիսի 24-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի

պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկայացել է իրավախախտ Մուսալեռ» ԱԿ տնօրեն Արտակ Եղիազարյանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Փարաքար համայնքի վարչական սահմաններում ապօրինի շինարարությունները կանխարգելելու նպատակով հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների կողմից ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Բաղրամյան գյուղի Մուսա Լեռան փողոց 1 հասցեում, իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ 04-030-0187-0002 կադաստրային ծածկագրով հողամասում, ապօրինի շինարարություն կատարելու մասին 24.07.2023թ. կազմված արձանագրությունը, վարչական հանձնաժողովի 26.07.2023թ. արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի 24.07.2023թ. թիվ 2929 զեկուցագիրը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ս. Մինասյանին 12.07.2023թ. թիվ ՔՏՄ/17.4/14732-23 գրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ա. Եղիազարյանի կողմից Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Մուսա Լեռան փողոց 1 հասցեում, իրեն սեփականության իրավունքով պատկանող հասարակական կառուցապատման գործառնաան նշանակության հողամասում առանց համապատասխան շինարարական թույլտվության կատարվել են շինարարական աշխատանքներ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի հուլիսի 24-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 հուլիսի 26-ին հրավիրվել է վարչական նիստ, որին մասնակցելու նպատակով «Մուսալեռ» ԱԿ տնօրեն Ա. Եղիազարյանը պատշաճ ծանուցվել է /փոստային առաքանի՝ LO 110371899AM/ և ներկայացել է վարչական նիստին:

Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել «Մուսալեռ» ԱԿ տնօրեն Ա. Եղիազարյանի կողմից ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով կատարված իրավախախտման վերաբերյալ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ

տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում «Մուսալեռ» ԱԿ տնօրեն Ա. Եղիազարյանը առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Մուսա Լեռան փողոց 1 հասցեում, իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ 04-030-0187-0002 կադաստրային ծածկագրով /վկայական 11032021-04-0071, տրված՝ 11.03.2021թ./, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ինքնակամ շինարարություն, մասնավորապես՝ 13.03.2023թ. տրված թիվ 34 շինարարության թույլտվությամբ տրված սրճարանի առանձին մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքնրի իրականացում, առանց ՔՏՀԱՏՄ-ին շինարարաության թույտվություն և 5-րդ ձևի տեղեկանք ներկայացնելու:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի

154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասերով նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
տավարձի հարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 25.07.2023թ. արձանագրությունը և Փարաքարի համայնքապետարանի

աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի կողմից 24.07.2023թ. թիվ 2930 զեկուցագիրը.
ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտ «Մուսալեռ» ԱԿ տնօրեն Արտակ Եղիազարյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325164235 հաշվեհամարին:

2. Առաջարկել իրավախախտող «Մուսալեռ» ԱԿ տնօրեն Արտակ Եղիազարյանին սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրյա ժամկետում վերացնել իրավախախտման հետևանքները:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Իրավախախտ «Մուսալեռ» ԱԿ տնօրեն Ա. Եղիազարյանին նախազգուշացնել, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել ինքնակամ կառույցի շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի վրա:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. հուլիսի 26
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 466-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածով, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշումը. ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող Փարաքար գյուղում գտնվող 04-094-0181-0044 կադաստրային ծածկագրով բնակավայրի այլ նշանակության 637,86 քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հող:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 637,86 քմ մակերեսով հողամասը հանել բնակավայրերի այլ նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի հաշվեկշռում:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. հուլիսի 27
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 467-Ա

ՍԵԴԱ ՀԱԿՈԲԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) ենթակետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2023 թվականի հունիսի 29-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, լիազորագիրը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հունիսի 29-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023G4XH8M), սեփականատեր Սեդա Հակոբի Սաֆարյանի 2023 թվականի հուլիսի 10-ի N 2664 դիմումը. որոշում եմ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Դվին թաղամաս 1-ին փակուղի թիվ 7 հասցեում գտնվող Սեդա Հակոբի Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-0050-0055 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 92.2 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 6.2 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան և թռչնանոցի համար կազմում է 1969 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 193 749.60 (հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր քառասունինը դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի 900325176155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը հմարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. հուլիսի 28
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 468-Ա

ԱՐՏՅՈՄ ՎԱԶԳԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ սեփականության իրավունքով Արտյոմ Վազգենի Խաչատրյանին պատկանող ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Մերձավան գյուղի Երևանյան խճուղի 5-րդ նրբ. 3/2 հասցեում առանց համապատասխան թույլտվության իրականացվել է ինքնակամ շինարարություն, մասնավորապես՝ բետոնե հիմքերի կառուցման, թաց պրոցեսների իրականացման համար տուգանք նշանակելու մասին հարցը, պարզեց, որ

Արտյոմ Խաչատրյանը խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում, ինչի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Միքաելյանի 25.07.2023թ. թիվ 2950 զեկուցագրի հիման վրա 2023 թվականի հուլիսի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկայացել է իրավախախտ Ա. Խաչատրյանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Փարաքար համայնքի վարչական սահմաններում ապօրինի շինարարությունները կանխարգելելու նպատակով հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի կողմից ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Մերձավան գյուղի Երևանյան խճուղի 5-րդ նրբ. 3/2 հասցեում ապօրինի շինարարություն կատարելու մասին 25.07.2023թ. կազմված թիվ 19 արձանագրությունը և 26.07.2023թ. թիվ 2950 զեկուցագիրը վարչական հանձնաժողովի 26.07.2023թ. արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Արտյոմ Խաչատրյանի կողմից Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Երևանյան խճուղի 5-րդ նրբ. 3/2 հասցեում առանց համապատասխան շինարարական թույլտվության կատարվել են շինարարական աշխատանքներ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի հուլիսի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 հուլիսի 26-ին հրավիրվել է վարչական նիստ, որին մասնակցելու նպատակով Ա. Խաչատրյանը պատշաճ ծանուցվել է՝ ծանուցումն առձեռն՝ ստորագրությամբ հանձնելու միջոցով և ներկայացել է վարչական նիստին:

Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել Ա. Խաչատրյանի կողմից ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով կատարված իրավախախտման վերաբերյալ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում Արտյոմ Խաչատրյանը առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Երևանյան խճուղի 5-րդ նրբ. 3/2 հասցեում իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ՝ բետոնե հիմքերի կառուցման, թաց պրոցեսների իրականացում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասերով նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 26.07.2023թ. արձանագրությունը և Փարաքարի համայնքապետարանի

աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի կողմից 25.07.2023թ. թիվ 2950 զեկուցագիրը. ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտ Արտյոմ Խաչատրյանյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինարարություն կատարելու, համար՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325191030 հաշվեհամարին՝ ստացող Փարաքար համայնք:

2. Առաջարկել իրավախախտող Արտյոմ Խաչատրյանյանին սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրյա ժամկետում վերացնել իրավախախտման հետևանքները:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Իրավախախտ Արտյոմ Խաչատրյանյանին նախազգուշացնել, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել ինքնակամ կառույցի շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի վրա:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. հուլիսի 28
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 469-Ա

ՄԵԼԱՆՅԱ ՀԵՆՐԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2023 թվականի հուլիսի 21-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հուլիսի 13-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023K7PHB8), հողամասի սեփականատեր Մելանյա Հենրիկի Մուրադյանի 2023 թվականի հուլիսի 17-ի N 2802 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Վ. Համբարձումյան փողոցի 18 հասցեում գտնվող Մելանյա Հենրիկի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0112-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 16,71 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 42,13 քառակուսի մետր արտաքին մակերեսով լողավազանը, 51,32 քառակուսի մետր մակերեսով ծածկը և 11,04 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր օժանդակ շինության, լողավազանի, ծածկի և պարսպի համար կազմում է 1389,6 դրամ,

վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 168 419,52 (մեկ հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր տասնինը դրամ հիսուներկու լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 31
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 470-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 382-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով. ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող բարձրարժեք հողատեսքն ավելի ցածրարժեքի փոխադրելու մասին» N 382-Ա որոշման՝

1) 1-ին կետում՝ «0.04» թիվը փոխարինել «0.1014» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 31
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 471-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 453-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասի ցածրարժեք հողատեսքը բարձրարժեքի փոխադրելու մասին» N 453-Ա որոշման՝

1) 1-ին կետում՝ «0.1» թիվը փոխարինել «0.1014» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 31
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 472-Ա

ԱՐԾՐՈՒՆԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2023 թվականի հուլիսի 17-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02112022-04-0038 վկայականը, հողամասի սեփականատեր Արծրունիկ Արտավազդի Պետրոսյանի 2023 թվականի հուլիսի 11-ի N 2700 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Այգեստանի փողոցի թիվ 25/1 հասցեում գտնվող Արծրունիկ Արտավազդի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0025-0026 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 123.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղը, 7.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 0,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան, բնակելի տան նկուղի համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար կազմում է 1389,6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 301, 496 (երեք հարյուր մեկ հազար չորս հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 31
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 473-Ա

ԱՆՆԱ ՎԻԿՏՈՐԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի ապրիլի 6-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 06042023-04-0099, հողամասի սեփականատեր Աննա Վիկտորի Ավագյանի 2023 թվականի հունիսի 28-ի N 2464 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Արգիշտի փողոցի թիվ 3 հասցեում գտնվող Աննա Վիկտորի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0087-0102 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 22,4 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր պարսպի համար կազմում է 1635 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 36 624 (երեսունվեց հազար վեց հարյուր քսանչորս) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. հուլիսի 31
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 474-Ա

ՍԻՐԱՆՈՒՇ ԵՐՎԱՆԴԻ ՂԱԶԱՆՉՅԱՆԻՆ ԵՎ ՊԵՐՃ ՍԱՀԱԿԻ ՂԱԶԱՆՉՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Սիրանուշ Երվանդի Ղազանչյանին /նույնականացման քարտ՝ 006435077, տրված՝ 10.05.2017թ. 003-ի կողմից/ և Պերճ Սահակի Ղազանչյանին /անձնագիր՝ AS0354530, տրված՝ 30.08.2018թ. 003-ի կողմից, հաշվառված՝ ք. Երևան, Շ. Շահամիրյան փողոց 1/1շ. 63 բն./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Փարաքար գյուղի Շ. Ազնավուրի փողոց 81 հասցեում, 04-0949-0136-0028 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինարարություն իրականացնելու, մասնավորապես՝ լողավազան կառուցելու համար տուգանք նշանակելու վերաբերյալ, պարզեց որ.

Սիրանուշ և Պերճ Ղազանչյանները /այսուհետ՝ իրավախախտներ/ խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել են ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում, ինչի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Միքաելյանի 28.07.2023թ. թիվ 3032 զեկուցագրի հիման վրա 2023 թվականի հուլիսի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկայացել իրավախախտները:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Փարաքար համայնքի վարչական սահմաններում ապօրինի շինարարությունները կանխարգելելու նպատակով հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների կողմից ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Փարաքար գյուղի Շ. Ազնավուրի փողոց 81 հասցեում ապօրինի շինարարություն կատարելու մասին 28.07.2023թ. կազմված թիվ 20 արձանագրությունը, վարչական հանձնաժողովի 01.08.2023թ. արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի 28.07.2023թ. թիվ 3032 զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Իրավախախտների կողմից Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Շ. Ազնավուրի փողոց 81 հասցեում, 04-0949-0136-0028 կադաստրային ծածկագրով, իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման գործառնաան նշանակության հողամասում առանց համապատասխան շինարարական թույլտվության կատարվել են շինարարական աշխատանքներ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի հուլիսի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 օգոստոսի 1-ին հրավիրվել է վարչական նիստ, որին մասնակցելու նպատակով Իրավախախտները պատշաճ ծանուցվել են՝ ծանուցումն առձեռն՝ ստորագրությամբ հանձնելու միջոցով և ներկայացել են վարչական նիստին:

Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել Սիրանուշ և Պերճ Ղազանչյանների կողմից ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով կատարված իրավախախտման վերաբերյալ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային

օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում իրավախախտներն առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Շ. Ազնավուրի փողոց 81 հասցեում, 04-094-0136-0028 կադաստրային ծածկագրով հողամասում իրականացրել են ապօրինի շինարարական աշխատանքներ՝ լողավազանի կառուցում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասերով նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 01.08.2023թ. արձանագրությունը և Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի 28.07.2023թ. թիվ 3032 զեկուցագիրը. ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտներ Սիրանուշ Երվանդի Ղազանչյանի և Պերճ Սահակի Ղազանչյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Շ. Ազնավուրի փողոց 81 հասցեում գտնվող հողամասում առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինարարություն կատարելու՝ լողավազան կառուցելու, համար 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման

օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325191030 հաշվեհամարին՝ ստացող Փարաքար համայնք:

2. Առաջարկել իրավախախտներին սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրյա ժամկետում վերացնել իրավախախտման հետևանքները:
3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Իրավախախտներին նախազգուշացնել, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել ինքնակամ կառույցի շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի վրա:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. օգոստոսի 1
Գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 475-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի հուլիսի 21-ին «Աստղիկ Մանուկյան» Ա/Ձ-ի կողմից, հողամասի սեփականատեր՝ Անդրանիկ Ավագյանի լիազորված անձ Նարեկ Վարդանյանի 2023 թվականի հուլիսի 24-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գտնվող Անդրանիկ Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0064-0030 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին՝ 0.0664 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Սևանի փողոց N 40 բնակելի տուն:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին՝ 0.04 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Սևանի փողոց N 40/1 կիսակառույց:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. օգոստոսի 01
գ.Փարաքար